2 (84). ԸԽՏԱՆՈՍԸ

Ըխտանոսը թաքավորի տղա էր, գիտուն աշակերտ էր, գլխու տեր տղա։ Կըլլի օր էդ տղան ցավ կունենա։ Թաքավորը կըսե.— Մե տղամ ունիմ, ես թաքավոր չըլլիմ, օր տղիս չբժշկեմ, էլ թաքավորությունս ինչի՞ պետք է։ Էստուն-էնտուն կայե, բժիշկնուն թուփ կէնե։ Բժշկներուն մեկը կըսե, թե.—Թաքավորն ապրած կենա, ես քու տղիդ ցավը հասկցա, բայց չեմ կրնա ազատե։ Տղադ ցավ չունի, դլուխն է ցավը։

— Է՞, հըպը հիմի,— կըսե թաքավորը։

— Հըպը՛,— կըսե,— էղոր Լոխմանին պիտի ապելացի էնե, ազատե։

Թաքավորը կըսե.—Հիմի Լոխմանին հ՞ուրտեղ կըլլի։

Հըպը՛.—Հարց առ իմացի,—կըսե բժիշկը։

Թաքավորը հարց կառնե, էստուն-էնտուն, կըսեն օր Ըստամբոլ կըլլի։ Թաքավորը ինչ պետք է կուտա լըլընուն, ղրկե կը Ըստամբոլ օր Լոխմանուն փերեն։ Կէրթան օրա մե քաղքիմ քընըրը էրեխաները կակալ կը խաղան, ամենապզտիկը էտոնց տարե կը։ Լըլընները նստել են սեյր կէնեն։ Պզտի տղան կըսե.— Այդոնք հ՞ուր օր կէրթան, ես գիտեմ։

Լըլընները կանչեն, կըսեն.— Դու ի՞նչ գիտես, թե հ՞ուր կէրթանք։

Տղան կըսե.— Դուք Լոխմանին տեղը չիտեք, ես հ՞ուրտեղ օր կըսեմ, կէրթաք գտնիք փերեք կը, Լոխմանը Թրվեզ է, ոչ թե Ըստամբոլ։

Էդոնք էդ ընկուզ խաղացող, ճամփա ցուց տվող տղին կըսեն.— Քու անունդ տուր օր էրթանք գտնինք քու անունդ տանք։

Էդ տղան անունը կուտա, կէրթան Լոխմանուն կը դտնին։

Լոխմանը կըսե.— Դուք ի՛նչ գիտեիք օր ես հոս եմ։

— Մենք Ըստամբոլ օր կէրթանինք, էկանք մե քաղքիմ քընըրը կակալ կը խաղային, մե տղամ ըսավ, թե՝ «Ես այդի մարթիքը հ՚ուր օր կէրթան, գիտեմ». մենք է կանչեցինք քովերս, հարց առանք։ Մեղի ըսավ, օր՝ «Կէրթաք Թրվիզ, դտնիք կը»։ Մենք էկել ենք քովդ օր հ՚ետվիս քաս թաքավորին տղին բժշկես։

Հիմի Լոխմանին էլի կըսե.— Ի՞նչ գիտեիք օր ես հոս էի։ Կըսեն.— Էդ տղան խրատ տվեց։ Հիմի թաքավորի հրաման է՝ քուքա՞ս, թե չէ։

Լոխմանը կըսե.— Ի՞նչըդ ես թաքավորի հրամանը մերժեմ։ Լոխմանին կըսե.— Էդ ձեզի ճամփա ցուց տվողին տեղը գիտե՞ք։

Կըսեն.— Գիտենք։— Կելլեն քուքան էդ քաղաքը, տղին կը գտնին։

Լոխմանին կըսե.— Ա՛յ տղա, դու իմ տեղս ի՛նչ գիտեիր։

Տղան կըսե.— Գիտեի՝ ըսի։

Լոխմանին տղին կըսե թե.— Ետև քուքաս օր էրթամ տի։

Տղան էդ ըլըլուն ու Լոխմանին հետ կէրթան։

Թաքավորին կըսեն օր ըլըլնին ու Լոխմանին էկան։ Լոխմանին Ըխտանոսին ցավին կայե, կաշե օր ցավը գլխեն է, ապելացի պիտի էնե։ Տղին օր ապելացի կէնե, ղաֆին թասը բանա կը Լոխմանին, կայե օր էղուղին վրա ինշխոր գորտը կպել է էղուղին։ Էսիկ օր մաշան, շմբուզը կը մոտեցընե, տղան կըսե.— Կե՞ցի, չէ՚ղավ, մաշան տաքցու՝ նո՛ր վերու. մաշան օր կը տաքցընե, մոտեցնե կը օրա գորտին վերցնե կը։ Լոխմանը տեսնի կը օր էս տղան իմաստուն, գիտունի է, մտածե կը ի՛նչ էնե։

Էդ տղան թողնե գաղ(տ)նի Լոխմանին քովեն փախչի կը։ Իրեն տունն օր կը փախչի, մորը կըպատմե թե.— Ըխտանոսին օր ապելացի էրավ, ես ըսի մաշան տաքցու՝ եփոր իմ ըսածս էրավ, ես էնոր միտքը հասկցա, օր կուղե իմ գլուխս աղա, ես քովեն փախա։ Հիմի էդտեղաց ժողովուրթը ինձի տի ժուռ քան, մենք մե կովըմ ունինք, էդոր փորը թափեմ, մեչը մտնիմ, ինձի նախանձվել է, օփիս[1] տի էնե Լոխմանին։

Նորեն կովին փորը կը թափե, մտնի կը մեչը, քուքան չեն գտնի։ Մորը կըսե.— Մա՛րի, Լոխմանին հերսն օր կիշնի՝ ես այան կելլեմ։

---

1 Խուզարկություն (Մ. Բ.)։

Կելլե այան, կըսեն օր տղան գտնվել է։

Լոխմանին քուքա, կըսե.— Այ տղա, ես հ՚ուր օր կէրթամ՝ էրթանք։

Էրկըրե-էրկիր կէրթա, Լոխմանուն աշկերտ կըլլի։

Կէրթա չայիր չիմըն տեղըմ կայե օր հինգ ախպար մե չայիրըմ մտել են քաղեն կը. էդ չայիրին է քովը մե ախպուրըմ կա։ Էս Լոխմանին ու էդ տղան էդ ախպրին քովը նստին կը, էդ քաղվորնուն հացը քուքա, ցորեկ ճաշը։ Մածուն են փերած էղե, շոք, արեքըկին տակը պառկին կը։

Էդտեղ Լոխմանին կըսե թե.— Մեր գործը էղավ, էսոնք հիվընդնան կը։

Էդ տղան կըսե.— Ինչըղ թե էղավ։

Լոխմանին կըսե.— Մածունը կերան արեքըկին պառկան, բիրըդի ջերմոտին կը։

Էդ տղան կըսե Լոխմանուն.—Սպասե, աշենք ջերմոտի՞ն կը, թե կազատին։

Էդոնք կելլեն, հինգ ախպարն է դերընդեստանը կը ծեծեն, մտնին կը չայիրը, իրար խառնեն կը առաջ, քըրտընին կը։

Տղան կըսե.— Տեսա՞ր, ես օր կըսեի, հիմի էդոնք կըլլին բողկեն սաղլամ, չունքի լավ աշխատան, իրենք Լոխմանի էղան։

Լոխմանը էդ տղին օր կը տանի, տղան մե կերպովրմ էդորեն կը ջոկնվի մտածե կը, օր գլխուն բանըմ կըփերե, Լոխմանին կըմնա առանձին։